ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 սեպտեմբերի 2026 թվականի N 1186-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ Ք. ԳԱՎԱՌ Ե. ՉԱՐԵՆՑԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 61/1 ՀԱՍՑԵՈՒՄ
ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ
ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ, ՊԱՐԻՍՊԵՐ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի պահանջներով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021 թ-ի N 233-Ն որոշումներով, «Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին» 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշումներով, հիմք ընդունելով որակավորում ունեցող անձ Խաչատուր Վահրիճի Ավեյանի /որակավորման վկայականի համար 0346՝ տրված 26.02.2015թ./ կողմից 04.06.2026թ-ին տրված ինքնակամ շինությունները հաշվառված լինելու վերաբերյալ չափագրման տվյալների մուտքագրման 2026YBDYLA ծածկագիրը, ինքնակամ կառույցն իրականացրած անձ՝ Մանուկ Լևիկի Ժամհարյանի դիմումը՝ Գավառ քաղաք Ե. Չարենցի փողոց թիվ 61/1 հասցեում իր կողմից ինքնակամ կառուցված 104.80 քմ. արտաքին /92.96 քմ. ներքին/ մակերեսով ավտոտնակը, 11.51քմ մակերեսով պարիսպը օրինականացնելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ շինությունը կառուցված է համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա, որի կառուցման ու

սպասարկման համար անհրաժեշտ հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ և կառույցը պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, **որոշում եմ**

1. Գավառ քաղաք Ե. Չարենցի փողոց թիվ 61/1 հասցեում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող 0.03567 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 104.80 քմ. արտաքին /92.96 քմ. ներքին/ մակերեսով ավտոտնակը, 11.51քմ մակերեսով պարիսպը համարել համայնքային սեփականություն՝ համաձայն կից ներկայացվող հողամասի և շինությունների հատակագծերի:

2. Գավառ քաղաք Ե. Չարենցի փողոց թիվ 61/1 հասցեում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող 0.03567 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 104.80 քմ. արտաքին /92.96 քմ. ներքին / մակերեսով ավտոտնակը, 11.51քմ մակերեսով պարիսպը ճանաչել օրինական:

3. Հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի այլ հողատեսքից փոխել բնակելի կառուցապատման հողատեսքի:

4. Օրինական ճանաչված ավտոտնակին տրամադրել Գավառ համայնք, ք. Գավառ Ե. Չարենցի փողոց թիվ 61/1 ավտոտնակ հասցեն:

5. Օրինականացված 104.80 քմ. արտաքին /92.96 քմ. ներքին/ մակերեսով ավտոտնակը, 11.51քմ մակերեսով պարիսպը՝ գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառքի միջոցով/ տրամադրելու մասին գրավոր առաջարկություն անել ինքնակամ կառույցն իրականացրած անձ՝ Մանուկ Լևիկի Ժամհարյանին:

6. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

7. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 սեպտեմբերի 2026 թվականի N 1187-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ
ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 101-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի, 24) կետով, հիմք ընդունելով քաղաքացիներ Հովակ Սերյոժայի Մարտոյանին, Գոհար Մամիկոնի Թորոսյանին, Վիգեն Հովակի Մարտոյանին, Վիհլեն Հովակի Մարտոյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասերից հրաժարվելու մասին դիմումը, **որոշում եմ**

1. Քաղաքացիներ Հովակ Սերյոժայի Մարտոյանին, Գոհար Մամիկոնի Թորոսյանին, Վիգեն Հովակի Մարտոյանին, Վիհլեն Հովակի Մարտոյանին սեփականության իրավունքով պատկանող ք. Գավառ Գեղարքունիք հասցեում գտնվող 0,23 հա մակերեսով 05-025-0701-0545 կադաստրային ծածկագրով խոտհարքը ճանաչել համայնքային սեփականություն:
2. Աշխատակազմի քարտուղարին՝ սույն որոշումն ընդունելուց հետո՝ 15-օրյա ժամկետում այն ներկայացնել կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման համար:
3. Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նկատմամբ իրավունք հավաստող վկայականը ստանալուց հետո՝ համայնքի ավագանու առաջիկա նիստում ավագանու հաստատմանը ներկայացնել համայնքի գույքագրման փաստաթղթերում առաջացող փոփոխությունները:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2026թ. սեպտեմբերի 03
ք. Գավառ



Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 սեպտեմբերի 2026 թվականի N 1188-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳՐԵՐՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և Գավառ համայնքի ավագանու 2026 թվականի հունիսի 15-ի թիվ 160-Ա որոշման դրույթներով, **որոշում եմ**

1. Մասնագիտական հմտությունները ի շահ Գավառ համայնքի ներդնելու համար.

Գարեգին Վրեժի Հակոբյանին - Հայաստանի Հանրապետության Ներիքն գործերի նախարարության ՓԾ Գեղարքունիքի ՓԻՎ պետ, Փ/Ծ գնդապետ

Արման Մանվելի Մանուկյանին - Հայաստանի Հանրապետության Ներիքն գործերի նախարարության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության Գավառի հրշեջ փրկարարական ջոկատի օղակի հրամանատար, փ/ծ ավագ

Արման Ռուբերտի Դադոյանին - Հայաստանի Հանրապետության Ներիքն գործերի նախարարության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության, Գավառի հրշեջ փրկարարական ջոկատի օղակի հրամանատար, փ/ծ ավագ

Արմեն Զիվանի Աղեկյանին - Հայաստանի Հանրապետության Ներիքն գործերի նախարարության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության, Գավառի հրշեջ փրկարարական ջոկատի օղակի հրամանատար, փ/ծ ավագ

Ժորա Սամվելի Մալխասյանին- Հայաստանի Հանրապետության Ներիքն գործերի նախարարության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության Գավառի հրշեջ փրկարարական ջոկատի օղակի հրամանատար, փ/ծ ավագ

Բաբկեն Կամոյի Մելքոնյանին - Հայաստանի Հանրապետության Ներիքն գործերի նախարարության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության Գավառի հրշեջ փրկարարական ջոկատի վարորդ, փ/ծ սերժանտ

պարգևատրել շնորհակալագրերով

2. Որոշումը ուժ մեջ է մտնում ստորագրման պահից:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2026թ. սեպտեմբերի 04
ք. Գավառ



Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 սեպտեմբերի 2026 թվականի N 1189-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ Ք. ԳԱՎԱՌ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 12/2 ՀԱՍՑԵՈՒՄ
ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ
ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի պահանջներով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներքնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021 թ-ի N 233-Ն որոշումներով, «Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին» 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշումներով, հիմք ընդունելով որակավորում ունեցող անձ Արշակ Հենրիկի Դավոյանի /որակավորման վկայականի համար 0119՝ տրված 27.02.2012թ./ կողմից 31.08.2026թ-ին տրված ինքնակամ շինությունները հաշվառված լինելու վերաբերյալ չափազրման տվյալների մուտքագրման 2026ZE322X ծածկագիրը, ինքնակամ կառույցն իրականացրած անձ՝ Ռուզաննա Մարատի Սարգսյանի դիմումը՝ Գավառ քաղաք Ազատության փողոց թիվ 12/2 հասցեում իր կողմից ինքնակամ կառուցված 104 քմ. արտաքին /83.2 քմ. ներքին/ մակերեսով տնտեսական շինությունը օրինականացնելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ շինությունը կառուցված է համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա, որի կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով

սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև
ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության
գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ և կառույցը պահպանելը չի խախտում այլ
անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում
քաղաքացիների կյանքին ու առողջությանը, **որոշում եմ**

1. Գավառ քաղաք Ազատության փողոց թիվ 12/2 հասցեում գտնվող՝ համայնքային
սեփականություն հանդիսացող 0.01565 հա մակերեսով բնակավայրերի նպատակային
նշանակության՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի
վրա ինքնակամ կառուցված 104 քմ. արտաքին /83.2 քմ. ներքին/ մակերեսով
տնտեսական շինությունը համարել համայնքային սեփականություն՝ համաձայն կից
ներկայացվող հողամասի և շինությունների հատակագծերի:
2. Գավառ քաղաք Ազատության փողոց թիվ 12/2 հասցեում գտնվող՝ համայնքային
սեփականություն հանդիսացող 0.01565 հա մակերեսով բնակավայրերի նպատակային
նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 104 քմ. արտաքին /83.2 քմ.
ներքին/ մակերեսով տնտեսական շինությունը ճանաչել օրինական:
3. Հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի այլ հողատեսքից փոխել
բնակելի կառուցապատման հողատեսքի:
4. Օրինական ճանաչված տնտեսական շինությանը տրամադրել Գավառ համայնք,
ք. Գավառ Ազատության փողոց թիվ 12/2 տնտեսական շինություն հասցեն:
5. Օրինականացված 104 քմ. արտաքին /83.2 քմ. ներքին/ մակերեսով տնտեսական
շինությունը՝ գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառքի միջոցով/
տրամադրելու մասին գրավոր առաջարկություն անել ինքնակամ կառույցն
իրականացրած անձ՝ Ռուզաննա Մարատի Սարգսյանին:
6. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի
անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների
պետական գրանցում կատարելու համար:
7. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ
Գ. Բոշյանի վրա:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2026թ. սեպտեմբերի 03
ք. Գավառ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 սեպտեմբերի 2026 թվականի N 1190-Ա

**ԳԱՎԱՌԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԾՈՂ
«ԲԵՐԴԿՈՒՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ
ԱՆՑԿԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1. մասի 11)-րդ կետով, ՊՈԱԿ-ների մասին ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1.1 կետով, ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի «ՀՈԱԿ-ների տնօրենների թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթի նախապատրաստման, անցկացման և արդյունքների ամփոփման կարգը հաստատելու մասին» 26.03.2020թ. թիվ 02-Ն հրամանով հաստատված կարգի 10-րդ կետով, **որոշում եմ**

1. Գավառի համայնքապետարանի ենթակայությամբ գործող «Բերդկունքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթը անցկացնել 2026 թվականի հոկտեմբերի 14-ին:
2. Հանձնարարել Գավառի համայնքապետարանի աշխատակազմին՝ իրականացնելու «Բերդկունքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար անցկացվող մրցույթի նախապատրաստական աշխատանքները:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2026թ. սեպտեմբերի 04
ք. Գավառ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 սեպտեմբերի 2026 թվականի N 1191-Ա

**ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ՀԵՐՈՍ ՔԱՂԱՔ ՆՈՎՈՌՈՍԻՅԱԿԻ ՓՈՂՈՑ 13 ՇԵՆՔ 10
ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ԿԻՑ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿՑԱԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի և «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 04072022-05-0019 վկայականը, որակավորում ունեցող անձ Արամ Վրոյրի Առաքելյանի /որակավորման վկայականի համար 0419՝ տրված 26.08.2021թ./ կողմից 08.04.2026թ-ին տրված ինքնական շինությունները հաշվառված լինելու վերաբերյալ չափազրման տվյալների մուտքագրման 2026VLFPSPG ծածկագիրը, <<Դավիթ Առաքելյան>> ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, Գավառ քաղաքի Հերոս քաղաք Նովոռոսսիյսկի փողոց 13 բազմաբնակարան բնակելի շենքի սեփականատերերի գրավոր համաձայնությունը և նկատի ունենալով, որ կցակառույցը գտնվում է Գավառ քաղաքի Հերոս քաղաք Նովոռոսսիյսկի փողոց 13 շենքի սպասարկման համար նախատեսված հողամասում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, ինչպես նաև հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կցակառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ**

1. Գավառ քաղաքի Հերոս քաղաք Նովոռոսսիյսկի փողոց 13 շենքի 10 բնակարանին կից 2020թ. ինքնակամ կառուցված 3.6 քմ մակերեսով կցակառույցը՝ 1 (մեկ) քառակուսի մետրի համար 362.7 (երեք հարյուր վաթսուներկու ամբողջ յոթ

տասնորդական) << դրամ, ընդամենը $3.6 \times 362.7 = 1400$ (մեկ հազար չորս հարյուր) << դրամ; ինքնական բացված դուռը և պատուհանը՝ յուրաքանչյուր 1 /մեկ/ դռան և 1 /մեկ/ պատուհանի համար 1209 /մեկ հազար երկու հարյուր ինը/ << դրամ, ընդամենը $2 \times 1209 = 2500$ /երկու հազար հինգ հարյուր/ << դրամ սահմանված վճարներով ճանաչել օրինական:

2. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

3. Շենք շինությունները չեն հակասում քաղաքաշինական նորմերին և դրանց մակերեսները որոշվում են քարտեզագրման, գեոդեզիայի, չափագրման /հաշվառման/ և հողաշինարարության գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող կազմակերպությունների /անձի/ կողմից տրված հատակագծերին համապատասխան:

4. Սույն որոշումը ներկայացնել << անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

5. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2026թ. սեպտեմբերի 07
ք. Գավառ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarighamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 սեպտեմբերի 2026 թվականի N 1192-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ Ք. ԳԱՎԱՌ ՀԱՅԱՌԱՏ ԹԱՂԱՄԱՍԻ Հ. ԱՐԲԱՀԱՄՅԱՆ 1-ԻՆ
ՓՈՂՈՑ ԹԻՎ 2 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՍԵՆ
ԺՈՐԱՅԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ, ԱՆԺԻԿ ԵԳՈՐԻ ՆԻԿՈՂՈՍՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ. ՀՀ ՀՕ-117-Ն օրենքով, Տեղական ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներքնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, հիմք ընդունելով 12.08.2026թ. տրված Գավառի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 07.04.1991թ. թիվ 19 որոշումից քաղվածքը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրով /տրված 11.08.2026թ-ին/ գույքի նկատմամբ ժառանգ՝ Արսեն Ժորայի Հայրապետյանի /ծնված 14.03.1979թ-ին/ դիմումը, «Դավիթ Առաքելյան» ԱԶ-ի կողմից տրված հողամասի ու շենք-շինությունների հատակագծերը, համաձայն որոնց ք. Գավառ Հացառատ թաղամասի Հ. Աբրահամյան 1-ին փողոց թիվ 2 հասցեում գտնվող հողամասը չափագրվել է, հատկացվել է 0.10 հա, ինչը փաստացի կազմում է 0.12638 հա, որը Արսեն Ժորայի Հայրապետյանի /ծնված 14.03.1979թ-ին / ժառանգության իրավունքով պատկանող հողամասն է և հաշվի առնելով, որ օրինական և ինքնակամ կառուցված 360.70 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1960-2023թթ./ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.12638 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, **որոշում եմ**

1. Վերականգնել Գավառ համայնք ք. Գավառ Հացառատ թաղամասի Հ. Աբրահամյան 1-ին փողոց թիվ 2 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Արսեն Ժորայի Հայրապետյանի /ծնված 14.03.1979թ-ին/, Անժիկ Եգորի Նիկողոսյանի /ծնված 04.04.1945թ-ին/ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար 0.10 հա օրինական հատկացված հողամասից ավել փաստացի օգտագործվող 0.02638 հա հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 0.12638 հա ընդհանուր մակերեսով հողամասի և օրինական կառուցված 315.30 քմ ընդհանուր մակերեսով շինությունների /կառուցված 1960-2022թ./ նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:

2. 1960-2023թթ. կառուցված 45.40 քմ մակերեսով շինությունները ճանաչել որպես ինքնակամ շինություն:

3. Անշարժ գույքին տրամադրել Գավառ համայնք, ք. Գավառ Հացառատ թաղամասի Հ. Աբրահամյան 1-ին փողոց թիվ 2 բնակելի տուն հասցեն:

4. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

5. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2026թ. սեպտեմբերի 07
ք. Գավառ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 սեպտեմբերի 2026 թվականի N 1193-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ Ք. ԳԱՎԱՌ ՀԱՅԱՌԱՏ ԹԱՂԱՄԱՍԻ Ա. ԲՈՒՌՆԱԶՅԱՆ 2-ՐԴ
ՓՈՂՈՑ, 3-ՐԴ ՆՐԲԱՆՑՔԻ 1-ԻՆ ԱՆՑՈՒՂԻ, ԹԻՎ 3 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ
ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱԶԳԵՆ ՎԱՂԱՐՇԱԿԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ,
ՀՐԱՆՈՒՇ ՄԵԽԱԿԻ ԽԱԶԱՏՐՅԱՆԻ, ՆԱԶԻԿ ՎԱԶԳԵՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ, ԱՐԱՄ
ՎԱԶԳԵՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ, ՆԵԼԼԻ ՎԱԶԳԵՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ, ՆԱՏԱՇԱ
ՎԱԶԳԵՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ
ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ. ՀՀ ՀՕ-117-Ն օրենքով, Տեղական ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, հիմք ընդունելով 04.08.2026թ. տրված Գավառի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 07.04.1991թ. թիվ 19 որոշումից քաղվածքը, ք. Գավառ Հացառատ թաղամասի Ա. Բուռնազյան 2-րդ փողոց, 3-րդ նրբանցքի 1-ին անցուղի. թիվ 3 հասցեի համասեփականատեր՝ Նազիկ Վազգենի Կարապետյանի /ծնված 22.09.1981թ-ին/ դիմումը, «Դավիթ Առաքելյան» ԱԶ-ի կողմից տրված հողամասի ու շենք-շինությունների հատակագծերը, համաձայն որոնց ք. Գավառ Հացառատ թաղամասի Ա. Բուռնազյան 2-րդ փողոց, 3-րդ նրբանցքի 1-ին անցուղի, թիվ 3 հասցեում գտնվող հողամասը չափագրվել է, հատկացվել է 0.08 հա, ինչը փաստացի կազմում է 0.11000 հա, որը Նազիկ Վազգենի Կարապետյանի /ծնված 22.09.1981թ-ին / համատեղ սեփականության իրավունքով պատկանող հողամասն է և հաշվի առնելով, որ օրինական և ինքնակամ կառուցված 217.30 քմ ընդհանուր մակերեսով շենք-

շինությունների /կառուցված 1971-1985թթ./ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.11000 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, **որոշում եմ**

1. Վերականգնել Գավառ համայնք, ք. Գավառ Հացառատ թաղամասի Ա. Բուռնազյան 2-րդ փողոց, 3-րդ նրբանցքի 1-ին անցուղի, թիվ 3 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Վազգեն Վաղարշակի Կարապետյանի /ծնված 25.01.1948թ-ին/, Հրանուշ Մեխակի Խաչատրյանի /ծնված 18.11.1949թ-ին/, Նազիկ Վազգենի Կարապետյանի /ծնված 22.09.1981թ-ին/, Արամ Վազգենի Կարապետյանի /ծնված 20.09.1985թ-ին/, Նելլի Վազգենի Կարապետյանի /ծնված 04.01.1977թ-ին/, Նատաշա Վազգենի Կարապետյանի /ծնված 26.01.1973թ-ին/ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար հատկացված հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 0.11000 հա ընդհանուր մակերեսով հողամասի և օրինական կառուցված 189.70 քմ ընդհանուր մակերեսով շինությունների /կառուցված 1971-1985թթ./ նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:

2. 1985թ. կառուցված 27.60 քմ մակերեսով անավարտ շինությունը ճանաչել որպես ինքնակամ շինություն:

3. Անշարժ գույքին տրամադրել Գավառ համայնք, ք. Գավառ Հացառատ թաղամասի Ա. Բուռնազյան 2-րդ փողոց, 3-րդ նրբանցքի 1-ին անցուղի, թիվ 3 բնակելի տուն հասցեն:

4. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

5. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2026թ. սեպտեմբերի 07
ք. Գավառ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 սեպտեմբերի 2026 թվականի N 1194-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 20 ՄԱՅԻՍԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ N 845-Ա
ՈՐՈՇՄԱՆ 1 -ԻՆԿԵՏԻ 1.3 ԵՆԹԱԿԵՏԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1 հոդվածի 2-րդ մասի, 23, 33 և 34 հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10 հոդվածի 11-րդ մասի և «Սոցիալական աջակցության» մասին ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի դրույթներով, հիմք ընդունելով Գավառ համայնքի ավագանու 20.01.2026թ արտահերթ նիստի թիվ 4 -Ն որոշման պահանջները, հիմք ընդունելով Գավառի համայնքապետարանի սոցիալական աջակցության ծառայությունների տրամադրման հանձնաժողովի առ 20.05.2026 թ. եզրակացությունը, **որոշում եմ**

Ուժը կորցրած ճանաչել «Դրամական հատուցում տրամադրելու մասին» Գավառ համայնքի ղեկավարի 20 մայիսի 2026 թվականի N 845-Ա որոշման 1-ին կետի 1.3 ենթակետը:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2026թ. սեպտեմբերի 07
ք. Գավառ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 սեպտեմբերի 2026 թվականի N 1195-Ա

**ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔ ՍԱՅԱԴՅԱՆ 4-ՐԴ ՓՈՂՈՑ 41/1 ՀԱՍՑԵՈՒՄ ՀԵՐՄԻՆԵ
ԽԱՉԱՏՈՒՐԻ ՍԱՖԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ
ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՆԱՍՆԱՇԵՆՔՆ ՕՐԻՆԱԿԱՆ
ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 18.05.2006թ. 912-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին ՀՀ Կառավարության 05 հունվարի 2022թ. 13-Ն որոշման հաստատված կարգի պահանջներով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 02092019-05-0022 վկայականը, որակավորում ունեցող անձ Արշակ Հենրիկի Դավոյանի /որակավորման վկայականի համար 0119՝ տրված 27.02.2012թ./ կողմից 31.03.2026թ-ին տրված ինքնակամ շինությունները հաշվառված լինելու վերաբերյալ չափազրման տվյալների մուտքագրման 2026XWHW5M ծածկագիրը, «Հայր և որդի Դավոյաններ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, Գավառ քաղաք Սայադյան 4-րդ փողոց 41/1 հասցեի սեփականատեր Հերմինե Խաչատուրի Սաֆարյանի /ծնված 05.07.1989թ./ դիմումը և նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, ինչպես նաև 0.029 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, շինությունները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ**

1. Գավառ քաղաք Սայադյան 4-րդ փողոց 41/1 հասցեում գտնվող, 2020թ. ինքնակամ կառուցված 281.6 քմ արտաքին /257.2 քմ ներքին/ մակերեսով անասնաշենքը՝ 1/մեկ/ քառակուսի մետրի համար 874 /ուֆ հարյուր յոթանասունչորս/ ՀՀ դրամ, ընդամենը

281.6x874=246200 /երկու հարյուր քառասունվեց հազար երկու հարյուր/ ՀՀ դրամ
սահմանված վճարով ճանաչել օրինական:

2. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները
60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրը:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2026թ. սեպտեմբերի 04
ք. Գավառ

